ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **22.03.2018թ.**
Ժամը 11:00

«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. ***Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.***

«Մեծ Ծիածան», «Պրովայդեր», «Մ.Ս.Վօլ Թրեյդ», «Գռօմ» ՍՊ ընկերությունների կողմից գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. ***Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Մեծ Ծիածան» ՍՊ ընկերությունը, հանձնաժողովին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությանը հիմնավորող, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. ***Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.***

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. ***«ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.***

Հանձնաժողովը որոշեց՝ «ՀՌԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի N 1 – N 7 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել ծանուցվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10

(տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու է սահմանված կարգով ծանուցվելուց և պայմանագրի նախագիծը ներկայացվելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)
ՀՌԱՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի
և վերահսկողության վարչության պետ — **Ա. Վարդանյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)
ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության
գլխավոր մասնագետ, գնումները համակարգող — **Ա. Մատինյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)
ՀՌԱՀ աշխատակազմի իրավական
ապահովման բաժնի պետ — **Ա. Ներսիսյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)
ՀՌԱՀ աշխատակազմի
քարտուղարության պետ — **Վ. Դավթյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)
ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման
բաժնի առաջատար մասնագետ — **Է. Գրիգորյան**

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)
ՀՌԱՀ աշխատակազմի վերահսկողության
բաժնի առաջատար մասնագետ — **Հ. Մուրադյան**